



Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ



OPEN SOCIETY
FOUNDATIONS

ՏԵՂԵԿԱՆՔ

2018 թ. ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՅԻՍ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀՀ ԵՎ ԱՀ /ԼՂ/ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ
ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տվյալների՝ 2018 թ-ի հունվար-մայիս ամիսների ընթացքում ՀՀ եւ ԱՀ /ԼՂ/ զինված ուժերում մահացել է 20 զինծառայող, որոնցից

- 4-ը՝ հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով,
- 6-ը՝ ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու,
- 2-ը՝ առողջական խնդիրների,
- 2-ը՝ սպանության (1-ը զենքի հետ վարվելու կանոնների խախտման, իսկ 1-ը դիտավորյալ սպանության),
- 6-ը՝ դժբախտ պատահարի (3-ը՝ ավտովթարի, 1-ը՝ շմուլ գազից թունավորման, 1-ը՝ ծառի տապալման, 1-ը ականի պայթյունից):

Ինքնասպանություն որակված 4 դեպքում առկա են պաշտոնական տվյալներ, իսկ 2-ի դեպքում ինքնասպանության վարկածը ոչ պաշտոնական է, ընդ որում՝ 1-ը ՋԼՄ տվյալ է, իսկ մյուսը՝ մահացած զինծառայողի հարազատին ոչ պաշտոնական աղբյուրներից տրամադրված տեղեկություն:

Նշենք, որ 2018 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում այս պահին որպես ինքնասպանություն դիտարկվող 6 դեպքերից 5-ը տեղի են ունեցել միայն մայիս ամսվա ընթացքում:

Ըստ ամիսների վիճակագրությունն ունի հետեւյալ պատկերը. հունվար՝ 5 դեպք, փետրվար՝ 4 դեպք, մարտ՝ 2 դեպք, ապրիլ՝ 3 դեպք, մայիս՝ 6 դեպք:

ԴԵՊՔԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Հրադադարի ռեժիմի խախտում

1. Վաչե Չիլինգարյան

2018 թ-ի հունվարի 7-ին՝ ժամը 13:20-ի սահմաններում, ՊԲ հյուսիսարեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, ադրբեջանական զինուժի կողմից արձակված կրակոցից մահացու վիրավորում է ստացել զինծառայող, 1998թ. ծնված Վաչե Նվերի Չիլինգարյանը¹:

Մահվան փաստի առթիվ ՀՀ զինվորական քննչական գլխավոր վարչության Երրորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական

¹ <http://nkmil.am/news/view/2062>

օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով, կատարվում է նախաքննություն²:

Վաչե Չիլինգարյանը, մի քանի ամիս առաջ ադրբեջանական բանակի դիպուկահարի կրակոցից վիրավորում ստացած ընկերոջն օգնության հասնելով դուրս էր բերել նրան կրակի գոտուց՝ փրկելով նրա կյանքը:

Զինձառայողին օգնության հասած ավագ լեյտենանտ Ե. Մուսինյանը եւ պայմանագրային զինձառայող, վարորդ Դ. Վանյանը եւս ստացել են մարմանական հրազենային վիրավորումներ եւ տեղափոխվել են զինհոսպիտալ: Ինչպես հայտնում է լրատվամիջոցը, նրանց կյանքին վտանգ չի սպառնում:

2. Հայկ Քալանթարյան

2018 թ-ի փետրվարի 7-ին՝ ժամը 13:50-ի սահմաններում, ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, ադրբեջանական զինուժի կողմից արձակված կրակոցից մահացու վիրավորում է ստացել ՊԲ զինձառայող, 1998թ. ծնված Հայկ Ռազմիկի Քալանթարյանը³: Վերջինս մահացել է զինվորական հոսպիտալում:

Երկրորդ կայագրային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելու դեպքի առթիվ, կատարվում է նախաքննություն⁴:

Զինձառայողը Տավուշի մարզի Նավուր գյուղից էր, սոցիալապես անապահով ընտանիքից, որն զբաղվում է գյուղատնտեսությամբ: Հայկ Քալանթարյանն ուներ ավագ քույր եւ կրտսեր եղբայր⁵:

3. Գրիգոր Եղոյան

2018 թ-ի փետրվարի 22-ին՝ ժամը 09:40-ի սահմաններում, ՊԲ հյուսիսարեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, ադրբեջանական զինուժի կողմից արձակված կրակոցից մահացու վիրավորում է ստացել ՊԲ զինձառայող, 1998թ. ծնված Գրիգոր Կարապետի Եղոյանը⁶:

Երրորդ կայագրային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելու դեպքի առթիվ, կատարվում է նախաքննություն⁷:

² <http://investigative.am/news/view/chilingaryan-spanutyun.html>

³ <http://nkrmil.am/news/view/2091>, <https://168.am/2018/02/08/905325.html>

⁴ <http://investigative.am/news/view/hayk-qalantaryan.html>

⁵ <http://www.aravot.am/2018/02/08/935993/>

⁶ <http://nkrmil.am/news/view/2105>

⁷ <http://investigative.am/news/view/grigor-exoyan.html>

Գրիգոր Եղոյանի ընտանիքը Ախուրյան գյուղից է, սակայն նրանք բնակվում էին Ռուսաստանի Դաշնությունում: Գրիգորն եկել էր Հայաստան ծառայության մեկնելու համար: 5 ամսից պիտի գորացրվեր:

4. Նարեկ Հովսեփյան

ԱՀ ՊՆ մամուլի ծառայության տարածած տվյալների համաձայն՝ 2018 թվականի ապրիլի 9-ին Արցախի N գորամասի պահպանության տեղամասի մարտական դիրքի ուղղությամբ հակառակորդի արձակած կրակոցի հետևանքով կրծքավանդակի շրջանում հրազենային վիրավորում է ստացել 1998թ. ծնված պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Նարեկ Գևորգի Հարությունյանը: Նա զինհոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին մահացել է:

Երկրորդ կայագորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելու դեպքի առթիվ, կատարվում է նախաքննություն:

ԱՀ նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով զինծառայողը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

Դժբախտ պատահար

Ավտովթար

1. Պարզելու Մարիբեկյան

2018 թ-ի հունվարի 6-ին Հրազդանի բժշկական կենտրոնում մահացել է հունվարի 2-ին Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասում ավտովթարի ենթարկված ժամկետային զինծառայող 19-ամյա Պարզելու Մարիբեկյանը:

Դեպքի պահին վերջինս օրինական հիմունքներով գտնվել է արձակուրդի մեջ եւ իր վարած Mercedes մակնիշի 34 MV 682 համարանիշի ավտոմեքենայով դուրս գալով ճանապարհի երթուղիի գոտուց, բախվել է ծառի⁸: Դեպքի մասին այլ մանրամասներ հայտնի չեն:

2. Էդգար Երեմյան

2018 թ-ի մարտի 15-ին՝ ժամը 17:30-ի սահմաններում, ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկում, պարապունքների ժամանակ տեղի ունեցած ավտովթարի հետևանքով մահացել է ՊԲ զինծառայող, 1999թ. ծնված Էդգար Գևորգի Երեմյանը⁹:

⁸ <http://operativ.am/?p=256851&l=am%2F>

⁹ <http://nkrmil.am/news/view/2119>

Դեպքի մանրամասները պարզելու համար կատարվում է քննություն: Լրատվամիջոցներից մեկի տվյալներով՝ դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ: Այնուամենայնիվ, զանգվածային լրատվամիջոցներում առկա չեն տվյալներ, թե ՀՀ քրեական օրենսգրքի որ հոդվածով է հարուցվել քրեական գործը¹⁰:

ՀՀ քննչական կոմիտեի կողմից տարածած հաղորդման համաձայն՝ նորակոչիկ վարորդների հետ ուսումնական երթի ժամանակ զորամասին պատկանող «ՁԻԼ-131» մակնիշի զինհամարանիշի ավտոմեքենան Մատադիս-Մարտակերտ ավտոճանապարհի առաջին կիլոմետրում դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից, կողաշրջվել եւ ընկել ճանապարհի աջ կողմի ձորը: Ավտոմեքենայի վարորդ, պարտադիր ժամկետային զինձառայող, շարքային Էդգար Գեւորգի Երեմյանը ստացած մարմնական վնասվածքներից զինհոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին մահացել է¹¹:

Էդգար Երեմյանը 1 ամսվա զինձառայող էր: Արարատի մարզի Ղուկասավան համայնքից էր¹²:

3. Սուրեն Այվազյան

ՀՀ ՊՆ մամուլի ծառայության տվյալներով՝ 2018 թվականի մայիսի 30-ին՝ ժամը 22:20-ի սահմաններում, ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով մահացել է ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պայմանագրային զինձառայող, 1992թ. ծնված Սուրեն Սուրենի Այվազյանը¹³:

Դեպքի մասին այլ մանրա մանրամասներ դեռևս հայտնի չեն:

Դժբախտ պատահար

Թունավորում

1. Մհեր Զիրոյան

2018 թ-ի հունվարի 6-ին՝ ժամը 02:10-ի սահմաններում, դժբախտ պատահարի հետևանքով (շնոլ գազից թունավորվելու արդյունքում), մահացել է ՊԲ պայմանագրային զինձառայող, 1992թ. ծնված Մհեր Վանիկի Զիրոյանը¹⁴:

ԶՔԳՎ երկրորդ կայազորային քննչական բաժնում քննություն է տարվում՝ պարզելու պայմանագրային զինձառայողի մահվան հանգամանքները¹⁵:

¹⁰ www.aysor.am/am/news/2018/03/16/ՊԲ-զինվոր-մահ/1386995

¹¹ <http://investigative.am/news/view/edgar-eremyan.html>

¹² <https://yn.am/?military&p=85085&l=am> , <https://yn.am/?military&p=85083&l=am>

¹³ <http://nkrmil.am/news/view/2184>

¹⁴ <http://nkrmil.am/news/view/2059>

¹⁵ <http://investigative.am/news/view/mher-ziroyan.html>

Միեր Զիրոյանը ավարտել էր Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը: Ծառայում էր Հաղորդում: 5 տարի սպա էր, վաշտի հրամանատար, կոչումով՝ ավագ լեյտենանտ: Զինծառայողի հորեղբորորդու խոսքերով՝ դեպքի օրը նա դիրքերից իջել է, լողանալիս է եղել, որպեսզի հետո Արցախից Հայաստան գնա: Ընկերները նույնպես տանն են եղել, երբ դուռը բացելով տեսել են, որ զինծառայողը մահացած է:

Միեր Զիրոյանը ծնունդով Մարալիկից էր, բայց ապրում էր Գյումրիում: 2016 թ-ի ապրիլյան մարտական գործողությունների ժամանակ վիրավորվել էր սրտից ներքև ընկած հատվածում, սակայն նրան այն ժամանակ հաջողվել էր փրկվել¹⁶:

Դժբախտ պատահար

Ծառի տապալում

1. Արմեն Հարությունյան

2018 թ-ի մարտի 24-ին՝ ժամը 16:55-ի սահմաններում, ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, ուժեղ քամու հետևանքով ծառի տապալման արդյունքում մահացել է ՊԲ զինծառայող, 1999թ. ծնված Արմեն Համայակի Հարությունյանը: Դեպքի մանրամասները պարզելու համար կատարվում է քննություն¹⁷:

19-ամյա Արմեն Հարությունյանը Երեւանից էր: Զորակոչվել էր 2018 թ-ի հունվարին: Ընտանիքի երկրորդ զավակն էր: Զինծառայողի դիակը մարտի 25-ին Արցախից տեղափոխվել է Երեւան, նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն:

Դժբախտ պատահար

Ականի պայթյուն

1. Ռուսլան Մանուկյան

2018 թվականի ապրիլի 17-ին ականի պայթյունից մահացու վիրավորում է ստացել Արցախի Հանրապետության զինված ուժերի 20-ամյա զինծառայող Ռուսլան Զորիկոյի Մանուկյանը: Դեպքի մասին հայտնի է դարձել լրատվամիջոցներից մեկի կողմից տարածած տեղեկություններով, որից հետո միայն դեպքի մասին պաշտոնական հաղորդագրություն է տարածվել նաև ԱՀ ՊՆ կողմից:

¹⁶ <http://www.tert.am/am/news/2018/01/06/new-details/2581131>

¹⁷ <http://nkrmil.am/news/view/2126>

Ըստ քննչական կոմիտեի նախնական տվյալների՝ հակահետևակային ակադեմիայի հետևանքով պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Ռուսլան Զորիկոյի Մանուկյանը ստացել է կյանքի հետ անհամատեղելի բեկորային վնասվածքներ: Դեպքի առթիվ երրորդ կայագորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ Քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ «անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, եթե անզուգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ»¹⁸:

Արցախի նախագահի ստորագրած հրամանագրի համաձայն պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար զինծառայող Ռուսլան Մանուկյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով¹⁹:

Սպանություն

Դիտավորյալ

1. Ալեք Կարապետյան

ԱՀ ՊՆ մամուլի ծառայության տվյալներով՝ 2018 թվականի ապրիլի 15-ին՝ ժամը 19:15-ի սահմաններում, ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկում տեղի ունեցած արտակարգ պատահարի հետևանքով մահացու հրազենային վիրավորում է ստացել ՊԲ զինծառայող, 1998թ. ծնված Ալեք Նվերի Կարապետյանը²⁰: ՀՀ ՔԿ նախնական տվյալներով՝ զինծառայող Ալեք Կարապետյանը կրծքավանդակի աջ շրջանում կյանքի հետ անհամատեղելի հրազենային վիրավորումն ստացել է ժամապահի պարտականությունները կատարելու ժամանակ: Զինհոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին վերջինս ստացած հրազենային վնասվածքից մահացել է:

Դեպքի առթիվ երրորդ կայագորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով: Քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ զինծառայողը հրազենային վնասվածքն ստացել է ծառայակցի հետ վիճաբանության ժամանակ՝ վերջինիս կողմից արձակված կրակոցի հետևանքով: Քննությամբ պարզվել է վիճաբանության շարժառիթը և ենթադրյալ հանցագործություն կատարած անձի ինքնությունը, ով ձերբակալվել է²¹:

¹⁸ <https://www.azatutyun.am/a/29174384.html>

¹⁹ <https://news.am/arm/news/447004.html>

²⁰ <http://nkrmil.am/news/view/2139>

²¹ <http://investigative.am/news/view/aleq-karapetyan.html>

Սպանություն

Չենքի հետ վարվելու կանոնների խախտում

1. Հովսեփ Գրիգորյան

2018թ. հունվարի 27-ին ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում Չենքի օգտագործման կանոնների խախտման հետևանքով, մահացու հրազենային վիրավորում է ստացել ՊԲ զինծառայող, 1998թ. ծնված Հովսեփ Կարենի Գրիգորյանը²²:

ՀՀ Քննչական կոմիտեի նախնական տվյալներով՝ շարքային Հովսեփ Գրիգորյանը զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրքում գլխի ճակատային շրջանում մահացու հրազենային գնդակային միջանցիկ վիրավորում է ստացել մեկ այլ պարտադիր ժամկետային զինծառայողի կողմից Չենքի հետ վարվելու կանոնները խախտելու հետևանքով:

Դեպքի առթիվ երրորդ կայագրային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մասով: Ժամկետային զինծառայողը ձերբակալվել է²³:

Հովսեփ Գրիգորյանի հարազատներին, սակայն, կասկածելի է թվում պաշտոնական վարկածը, համաձայն որի՝ ձերբակալված զինծառայողը՝ Աշոտ Չախալյանը, ունենալով մեկ ու կես տարվա փորձառություն, կարող էր անզգուշությամբ կրակոց արձակել, այն էլ ոչ թե իրեն, այլ Հովսեփին ամրակցված Չենքից՝ ԱԿՄ տեսակի ինքնաձիգից: Ըստ Գրիգորյանի մոր՝ Արմինե Ավետիսյանի խոսքերի՝ գործի նյութերում՝ 28.01.2018 թ. թվագրված Մարտակերտի հատկապես կարելու գործերի բաժնի քննիչ Ս. Ա. Եղյանի գրությունում, նշված է, որ գնդացրորդ Աշոտ Չախալյանը նոնակաձիգ Հովսեփ Գրիգորյանի հետ դիտորդի պարտականությունները կատարելու ժամանակ վերցրել է վերջինիս ամրակցված ԱԿՄ տեսակի ինքնաձիգը, խախտել է Չենքի հետ վարվելու կանոնները, այն է՝ Հովսեփ Գրիգորյանին վախեցնելու նպատակով մարտական փամփուշտներով լիցքավորված պահեստատուփը ինքնաձիգին ամրացված վիճակում, անհարկի կատարել է լիցքավորում, ինքնաձիգի փողը ուղղել է Գրիգորյանի գլխի ուղղությամբ, հանել պահեստատուփը եւ սեղմել է ձգանը: Հովսեփ Գրիգորյանը եւ Աշոտ Չախալյանը դեպքի վայրում միայնակ են եղել:

Վարույթ իրականացնող մարմինը առաջին իսկ օրվանից կենտրոնացել է միակ վարկածի վրա, որի հիմքը Չախալյանի ցուցմունքներն են:

²² <http://nkrmil.am/news/view/2083>

²³ <http://investigative.am/news/view/hovsep-grigoryan.html>

Հովսեփ Գրիգորյանը Սպիտակից էր, սակայն ընտանիքի հետ ապրում էր Ռուսաստանում: 2017 թ-ի ամռանը եկել էր Հայաստան՝ զինծառայության անցնելու նպատակով եւ գորակոչվել Արցախի «Եղնիկներ» զորամաս:

Հովսեփ Գրիգորյանի մոր խոսքերով՝ որդին դժգոհ էր իր հրամանատարից. վերջինս սովորաբար գիշերը արթնացնում էր զինվորներին, «շարում» դրսում եւ ստիպում ՋՈւ կանոնագրքեր կարդալ: Նվաստացնում էր Ռուսաստանից եկած զինծառայողներին մյուսների առջեւ՝ հայերեն դժվարությամբ կարդալու համար:

«Եղնիկներից» Հովսեփյանների տուն եկած հրամկազմի ներկայացուցիչը հայտնել է զինվորի մորը, որ այդ հրամանատարին տեղափոխել են այլ զորամաս եւ փոխարենը նշանակել են իրեն՝ հավելելով, որ դեպքից հետո զորամասում որոշ մարդիկ ազատվել են աշխատանքից:

Իսկ ՀՀ զինվորական դատախազ Վահե Հարությունյանը զինծառայողի մահից հետո իր մոտ է հրավիրել նրա մորը եւ խոստանալով, որ ամեն ինչ կանի գործը բացահայտելու համար, տեղեկացրել է, որ զորամասի անձնակազմից մի քանի հոգի ազատվել են աշխատանքից, իսկ մի քանիսն էլ՝ այժմ կալանավորված են²⁴:

Ինքնասպանություն

1. Հարություն Խաչատրյան

2018 թ-ի հունվարի 16-ին ԱՀ ՊՆ մամուլի ծառայության տարածած տեղեկության համաձայն նույն օրը ժամը 01:15-ի սահմաններում, ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, դեռեւս չպարզված հանգամանքներում, մահացու հրազենային վիրավորում է ստացել ՊԲ զինծառայող, 1998թ. ծնված Հարություն Վանյայի Խաչատրյանը²⁵:

Հետազայում զանգվածային լրատվամիջոցներով տարածվեց տեղեկություն այն մասին, որ իրավապահների կողմից քննվում է ինքնասպանության վարկածը²⁶: Ըստ որոշ ՋԼՄ տեղեկությունների՝ դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով²⁷:

²⁴ http://forrights.am/?In=1&id_ =10&page_id=701, http://forrights.am/?In=1&id_ =10&page_id=699, http://forrights.am/?In=1&id_ =10&page_id=698

²⁵ <http://nkrmil.am/news/view/2067>

²⁶ <http://www.armtimes.com/hy/article/128998>, <http://armtimes.com/hy/article/129000>

²⁷ <http://armtimes.com/hy/article/129048>

Զինճառայողը Արցախի Մարտունու շրջանի Թաղավարտ գյուղի բնակիչ էր: Ունի կրտսեր քույր եւ եղբայր: Հայրը աշխատում է ԱՀ ԶՈւ կենտրոնական շտաբում, կոչումով գնդապետ է:

Այլ մանրամասներ դեպքի վերաբերյալ չի նշվում ոչ պաշտոնական աղբյուրներում, ոչ էլ ՋԼՄ-ներում:

2. Արթուր Գասպարյան

2018 թվականի մայիսի 4-ին, ժամը 01.10-ին սահմաններում, ՀՀ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքում հայտնաբերվել է ժամկետային զինճառայող Արթուր Արտյոմի Գասպարյանի (ծնված 1998թ., 2017-1 զորակոչ, Նաիրիի ԶԿ) դին՝ գլխի շրջանում ստացած մահացու հրազենային վիրավորումով:

ՀՀ քննչական կոմիտեի տվյալներով՝ զինճառայողը մահացու վիրավորումը ստացել է բերանի խոռոչի շրջանում: Վեցերորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով: Քրեական գործով կատարված քննության արդյունքում բացահայտվել են զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ շարքային Գասպարյանին անպարկեշտ ձևով ստորացնելու՝ վիրավորանք հասցնելու, ինչպես նաև մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելու դեպքեր: Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ պայմանագրային զինճառայող, հենակետի ավագին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին և 360-րդ հոդվածի 2-րդ մասերով: Նախաքննությունը շարունակվում է²⁸:

3. Լևոն Թորոսյան

2018 թվականի մայիսի 6-ին, ժամը 07.30-ի սահմաններում, ՀՀ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքում հայտնաբերվել է ժամկետային զինճառայող Լևոն Արսենի Թորոսյանի (ծնված 1999թ., 2017-2 զորակոչ, Արմավիրի ԶԿ) դին՝ գլխի շրջանում ստացած մահացու հրազենային գնդակային վիրավորումով²⁹:

²⁸ <http://investigative.am/news/view/artur-gasparyan-mexadranq.html>, <http://newsarmenia.am/am/news/armenia/-inqnaspanutyany-hascnelu-hatkanishnerov-greakan-gorc-e/>

²⁹ <http://mil.am/hy/news/5268>

Ըստ ՀՀ քննչական կոմիտեի Լ.Թորոսյանի դին հայտնաբերվել է ծնոտի ստորին և գլխի գագաթային շրջաններում ստացած միջանցիկ հրազենային գնդակային մահացու վիրավորումով (ծնոտի շրջանում հրազենային վնասվածքը մուտքային է, իսկ գագաթային հատվածում՝ ելքային):

Վեցերորդ կայագորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով (սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը)³⁰: Փորձագետ Ռուբեն Մարտիրոսյանի խոսքերով՝ Լևոն Թորոսյանի սեռական օրգանների վրա հայտնաբերվել են արյունազեղումներ, որոնք, ըստ փորձագետի, կարող էին առաջանալ միայն բուրժ առարկայով ուժգին հարվածի հետևանքով:

Զինձառայողի աջ և ձախ ձեռքերին առկա են նաև միանման, միաչափ և նույն վաղեմություն ունեցող երկու քերծվածքներ՝ արմնկահողային շրջանում, որը նշանակում է, որ դեպքը ինքնասպանություն որակելը սխալ է:

Հարուցվել է քրեական գործի շրջանակներում կատարված բազմակողմանի քննության արդյունքում բացահայտվել են զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ ժամկետային զինձառայող, շարքային Լևոն Թորոսյանին անպարկեշտ ձևով ստորացնելու, վիրավորանք հասցնելու դեպքեր: Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ դիրքի ավագ, պարտադիր ժամկետային զինձառայող, կրտսեր սերժանտին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով (3 դրվագ): Նախաքննությունը շարունակվում է³¹:

4. Համլետ Գրիգորյան

2018 թվականի մայիսի 20-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում, ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում մահացու հրազենային վիրավորում է ստացել ՊԲ զինձառայող, 1999թ. ծնված Համլետ Նորայրի Գրիգորյանը³²:

ՀՀ ՔԿ տվյալների համաձայն՝ ժամկետային զինձառայող, շարքային Համլետ Նորայրի Գրիգորյանը գնդակային միջանցիկ հրազենային մահացու վիրավորում է ստացել ծնոտի ստորին (մուտքային) և գլխի գագաթային (ելքային) շրջաններում:

³⁰ <https://megainfo.org/hy/news/864-ayszingbb.html>

³¹ <http://investigative.am/news/view/levon-torosyanimah-mexadrang.html>

³² <http://nkmil.am/news/view/2178>

Առաջին կայագորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով: ՋԲԳՎ առաջին կայագորային քննչական բաժնում քննություն է տարվում՝ պարզելու զինծառայողի մահվան հանգամանքները³³:

5. Մարտին Խաչատրյան

ՀՀ ՊՆ մամուլի ծառայության տարածած հաղորդագրության համաձայն՝ 2018 թ. մայիսի 22-ին, ժամը 13.30-ի սահմաններում, ՀՀ հարավարևմտյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքում հայտնաբերվել է ժամկետային զինծառայող, շարքային Մարտին Գրիգորի Խաչատրյանի (ծնված 1998թ., 2017-2 զորակոչ, Գյումրիի ՋԿ) դին՝ որովայնի շրջանում ստացած մահացու հրազենային վիրավորումով³⁴:

ՀՀ ՔԿ ՋԲԳՎ ութերորդ կայագորային քննչական բաժնում քննություն է տարվում՝ պարզելու ժամկետային զինծառայող, շարքային Մարտին Գրիգորի Խաչատրյանի մահվան հանգամանքները:

Մարտին Խաչատրյանը ծառայության էր անցել 6 ամիս առաջ՝ ունենալով առողջական խնդիրներ: Սրտի առիթմիայի պատճառով զինծառայողի զորակոչը հետաձգվել էր մեկ տարով, երբ նրա մոտ գրանցվել էր սրտի 180 զարկ բռնկում: Իսկ մեկ տարի անց՝ 140 զարկ բռնկում, ինչի պարագայում նա ճանաչվել էր պիտանի զինվորական ծառայությանը. զինկոմիսարիատում նրան հայտնել էին, որ հասունացման տարիքում բոլորի մոտ էլ կարող է լինել նման խնդիր և վստահեցրել, որ վտանգ չկա և խնդիրը կկարգավորի: Ըստ եղբոր, ծառայության ընթացքում զինծառայողը մի քանի անգամ վատ է զգացել, ճնշումը բարձրացել է և նա չի իրականացրել մարտական հերթապահություն³⁵:

Չինծառայողի մահվան մասին պաշտոնական վարկած չկա: Հելսինկյան Քաղաքացիական Ասաբլմեայի Վանաձոր գրասենյակի աշխատակցի հետ զրուցելիս զինծառայողի մորեղբայրը՝ Հրաչը, ասել է, որ իրեց որոշակի նախնական տեղեկություններ են հասել այն մասին, որ Մարտին Խաչատրյանը ինքնասպանություն է գործել, չնայած, որ պաշտոնապես իրենց դեռևս չեն տեղեկացրել զինծառայողի մահվան պատշառի մասին:

6. Հմայակ Հակոբյան

Pastinfo.am կայքում տարածված տեղեկատվության համաձայն 2018 թվականի մայիսի 26-ին ինքնասպանության դեպք է գրանցվել Երեւանում գտնվող ՀՀ ՊՆ N

³³ <http://investigative.am/news/view/hamlet-grigoryan.html>

³⁴ <http://mil.am/hy/news/5298>

³⁵ <http://www.aravot.am/2018/05/24/959236/>

գորամասում: Ժամը 13-ի սահմաններում՝ գորամասի կապի վաշտի ննջարանում՝ կրծքավանդակի շրջանում ստացած միջանցիկ հրազենային գնդակային մահացու վիրավորումով հայտնաբերվել է կապիտան Հմայակ Հակոբի Հակոբյանը: Տեղեկությունը հաստատվել է նաև ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանի կողմից³⁶:

2018 թվականի մայիսի 27-ին դեպքի մասին տեղեկատվություն է տարածվել նաև ՀՀ Քննչական կոմիտեի ֆեյսբուքյան էջում³⁷:

ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժնում քննություն է տարվում՝ պարզելու կապիտան Հ.Հակոբյանի մահվան հանգամանքները: Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն³⁸:

Առողջական խնդիրներ

1. Հայկ Հակոբյան

2018 թ-ի փետրվարի 8-ին՝ ժամը 14:15-ի սահմաններում, Ստեփանակերտի կենտրոնական զինվորական հոսպիտալում հիվանդության պատճառով (նախնական ախտորոշմամբ՝ մինինգոկոկցեմիա՝ կայծակնային ձև) մահացել է ՊԲ զինծառայող, 1999թ. ծնված Հայկ Սերգեյի Հակոբյանը: Դեպքի մանրամասները պարզելու համար կատարվում է քննություն³⁹:

Դեպքի մասին հետագա մանրամասներ չեն հրապարակվել:

2. Ստեփան Ստեփանյան

2018 թ-ի փետրվարի 21-ին Aravot.am լրատվական կայքով տեղեկատվություն տարածվեց այն մասին, որ մի քանի օր առաջ մահացել է Իջեւանում տեղակայված գորամասի ժամկետային զինծառայող, Կոտայքի մարզի Գառնի գյուղի բնակիչ Ստեփան Ստեփանյանը⁴⁰:

Հետազայում տեղեկատվությունը պաշտոնական հաստատում ստացավ ՀՀ ՊՆ մամուլի խոսնակի կողմից, որը պարզաբանեց, որ զինծառայողը գտնվել է արձակուրդում, հետո վերադարձել է Իջեւանի գորամաս, ինքնազգացողությունը վատացել է, իսկ մահը վրա է հասել 2018 թ-ի փետրվարի 12-ին հոսպիտալում⁴¹:

³⁶ www.pastinfo.am/hy/news/2018/05/26/Երևանում-գտնվող-գորամասում-կապիտան-է-գնիվել/700326

³⁷ https://mobile.facebook.com/story.php?story_fbid=1388216861325059&id=523772197769534&_rdc=1&_rdr&refsrc=https%3A%2F%2Fm.facebook.com%2Fstory.php

³⁸ <http://investigative.am/news/view/hmayak-hakobyan-mah.html>

³⁹ <http://nkrmil.am/news/view/2092>

⁴⁰ <http://www.aravot.am/2018/02/21/938284/>

⁴¹ <http://www.lragir.am/index/arm/0/country/view/170646>

ՀՀ Քննչական կոմիտեի տարածած տեղեկությունների համաձայն՝ պարտադիր ժամկետային զինձառայող Ստեփան Սեւակի Ստեփանյանը մահացել է ԿԿԶՀ վերակենդանացման բաժանմունքում: Նախնական տվյալներով՝ Ստեփանյանին 2018թ. փետրվարի 1-ից 10-ը հատկացվել է արձակուրդ, որը վերջինս անցկացրել է Կոտայքի մարզի Գառնի գյուղում: 2018թ. փետրվարի 10-ին զինձառայողը հորեղբոր ուղեկցությամբ՝ վերջինիս ավտոմեքենայով, Գառնի գյուղից ուղևորվել է Երեւանի Հյուսիսային ավտոկայարան՝ Իջեւան մեկնելու եւ զինձառայության վերադառնալու համար: Ավտոկայարանի ճանապարհին զինձառայողի ինքնազգացողությունը վատացել է, բայց մեկնելուց չի հրաժարվել: Նույն օրը՝ ժամը 23:15-ի սահմաններում, Ս.Ստեփանյանը դիմել է գորամասի բուժկետ, ապա բուժօգնության համար տեղափոխվել է Իջեւանի ԲԿ: Հաջորդ օրը՝ փետրվարի 11-ին, ժամը 07:30-ին, Ս.Ստեփանյանն անգիտակից վիճակում տեղափոխվել է ՊՆ ԿԿԶՀ, որտեղ փետրվարի 12-ին՝ ժամը 17:30-ին մահացել է:

Դիակի դիախերձման արդյունքներով՝ դատաբժիշկները որպես մահվանը հանգեցրած ախտաբանական անմիջական վիճակ արձանագրել են՝ գլխուղեղի այտուց, ուղեղաբնի ներհիման համախտանիշով, իսկ որպես մահվան հիմնական պատճառ՝ «կոմա՝ անհայտ ծագման»: Զինձառայողի մահվան դեպքի առթիվ նախապատրաստված նյութերով փետրվարի 22-ին ՀՀ ՔԿ ՋԲԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով՝ բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը, կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ: Նախաքննությունը շարունակվում է:⁴²

Զինձառայողի հորեղբայրը՝ Սարգիս Ստեփանյանը, նշել է, որ զինվորի մահվան վկայականում որպես մահվան պատճառ նշված է նաեւ՝ թունավորում⁴³:

⁴² <http://investigative.am/news/view/stepan-stepanyan.html>

⁴³ http://forrights.am/?in=1&id=10&page_id=704